ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N H2019/0529/3

ք. Երևան "29" մայիսի 2019թ.

Հայկական Ծրագրեր Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունն, ի դեմս տնօրեն Գագիկ Սարգսյանի, հետագայում՝ Կատարող, մի կողմից, և ՀՀԱՆ Քրեակատարողական Ծառայություն, ի դեմս քրեակատարողական ծառայության պետ Արտյոմ Մխոյանի, հետագայում՝ Պատվիրատու, մյուս կողմից, վարեցին բանակցություններ և կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի համաձայն Կատարողն իրականացնում է Պատվիրատուի մոտ տեղադրված «ՀԾ-Հաշվապահ 7» 9 (ինը) աշխատատեղի համար համակարգչային ծրագրի (հետագայում՝ Համակարգ) սպասարկում, ինչը ներառում է հետևյալը.

1.1.1. Համակարգի շահագործման հետ կապված խորհրդատվություն:

1.1.2. Կատարողի կողմից որոշված պարբերականությամբ Համակարգի թարմացված տարբերակների տրամադրում, որտեղ արտացոլված են հաշվապահական և հարկային հաշվառմանը վերաբերվող լրամշակումները և նոր ֆունկցիոնալ հնարավորությունները:

1.2. Սպասարկման ձևը.

1.2.1. Սպասարկման աշխատանքներն իրականացվում են հեռահաղորդակցության (հեռախոսակապ, ինտերնետ, էլ.փոստ և այլն) միջոցներով:

1.2.2. Համակարգի թարմացված տարբերակները տրամադրվում են Կատարողի կողմից ընտրված եղանակներով:

2. Պայմանագրի ժամկետը

2.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի և Կատարողի կողմից կնքելու պահից և գործում է մեկ տարի:

3. Աշխատանքների արժեքը և վճարման կարգը

3.1. Համակարգի սպասարկման արժեքն է 200,000.00 դրամ, ԱԱՀ 20%՝ 40,000.00 դրամ, ընդամենը՝ 240,000.00 դրամ:

3.2. Պատվիրատուն վճարում է Համակարգի սպասարկման արժեքը Պայմանագիրը կնքելուց հետո 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

4. Կատարողի պարտավորությունները

4.1. Ծրագրային ապահովման մեջ խափանումների և սխալների հայտնաբերման դեպքերում (բացի տեխնիկական և ծրագրային միջոցների անհամատեղելիության, տեխնիկական միջոցների խափանումների, ծրագրային վիրուսների, աշխատակիցների՝ ծրագրով չնախատեսված գործողությունների պատճառով առաջացած դեպքերի) վերացնել դրանք ապագա տարբերակներում:

4.2. Տրամադրել Պատվիրատուին Համակարգի այն տարբերակները, որոնք լույս են տեսել մինչև Պայմանագրի ավարտը:

4.3. Համակարգի սպասարկումը չի ներառում Պատվիրատուի կողմից խորհրդատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

- հաշվապահական և հարկային հաշվառման վարման մեթոդաբանություն,
- ուսուցման ընթացքում ստացված տեղեկատվություն,
- Համակարգի շահագործման հետ չկապված՝ Windows օպերացիոն համակարգի օգտագործում,
- տեխնիկական միջոցների և համակարգչային ցանցի ոչ նորմալ աշխատանք:

4.4. Պայմանագրի ավարտից հետո Կատարողը Պատվիրատուի նկատմամբ որևէ պարտավորություն չի կրում:

5. Պատվիրատուի պարտավորությունները

5.1. Ապահովել Համակարգի գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովումների համապատասխանությունը Կատարողի կողմից կատարված թարմացումներին:

5.2. Պատվիրատուի պարտավորությունն է համարվում Համակարգի պաշտպանական էլեկտրոնային բանալու և տվյալների պահոցի պահպանությունն ու ամբողջականությունը:

6. Այլ պայմաններ

6.1. Սույնով Պատվիրատուն հավաստում է, որ ծանոթացել է www.armsoft.am կայքում տեղադրված ուսուցման բովանդակությանը:

6.2. Կատարողի պատասխանատվությունը անկախ մեղքի ձևից սահմանափակվում է սույն Պայմանագրի արժեքի 20(քսան) տոկոսի չափով:

6.3. Սույն պայմանագրի կատարման հետ կապված հարցերը Կողմերը կձգտեն լուծել բանակցությունների միջոցով: Կողմերի միջև համաձայնության չգալու դեպքում, վիճելի հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Սույն պայմանագիրը կազմվում է 2(երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հայկական Ծրագրեր ՍՊԸ	**ՀՀԱՆ Քրեակատարողական Ծառայություն**
h/h 2500010002240100	h/h 900011175016
Արմավիսանկ ՓԲԸ	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Էլ.Փոստ՝ support@armsoft.am	Հեռ.՝ Էլ.Փոստ՝ aks.els@mail.ru
ՀՎՀՀ՝ 00807555	ՀՎՀՀ՝ 02204739
Հասցե՝ ք. Երևան, Չարենցի փ. 1	Հասցե՝ Երևան, Արշակունյաց 63
Տնօրեն Գ. Սարգսյան	Քրեակատարողական ծառայության պետ Ա. Մխոյան